ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ*

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

artashesshahnazaryan.1950@gmail.com

ORCID: 0009-0006-7000-5335

DOI: 10.54503/1829-4073-2023.2.66-79

ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՈՒ ՄԻՋՃՅՈՒՂԱՅԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1160–1240-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)

Բանալի բառեր՝ Զաքարյաններ, Մեծ Սարգիս, Զաքարե Բ, Իվանե Ա, Ավագ, Շահնշահ Ա, Վահրամ Գագեցի

Ներածություն

XII դ. վերջերից XIV դ. երկրորդ կեսն ընկած ժամանակամիջոցում ոչ միայն հյուսիս-արևելյան Հայաստանի, այլև վրացական թագավորության ռազմաքաղաքական կյանքում աննշան ընդմիջումներով նշանավոր Զաքարյան իշխանատոհմի[1] պատմության հետ կապված տարաբնույթ հարցեր եղել ու մնում են հայ և օտարազգի հետազոտողների ուշադրության կենտրոնում: Այդուհանդերձ, Զաքարյանների պատմության հետ կապված որոշ հարցեր կարոտ են առանձին քննության: Այդպիսիներից է, օրինակ, պատմական առանձին շրջափուլերում Զաքարյանների միջանձնային ու միջճյուղային փոխհարաբերությունների հարցը:

Զաքարյանների պատմության այդ կողմին անդրադառնալը հնարավորություն կտա ավելի առարկայական ու ամբողջական պատկերացում կազմելու զարգացած ավատատիրության շրջանի երկրորդ փուլի ամենահոչակավոր հայկական իշխանատոհմի ներքին կյանքի մասին: Ընդ որում, քանզի Զաքարյանները գործում էին ոչ միայն հայկական, այլև վրացական միջավայրում, նրանց հատկապես միջճյուղային փոխհարաբերությունները հաճախ

* *Հոդվածը ներկայացվել է 16.05.23, գրախոսվել է 24.05.23, ընդունվել է տպագրության 28.08.23:*

[1] Այս իշխանատոհմը վրացական աղբյուրներում վկայակոչվում է Մխարգրձելիներ (Երկայնաբազուկներ) անունով:

աղերսվում էին հայ-վրացական սերտ ու բազմաբնույթ առնչություններին, որոնց անդրադառնալը ևս կարևոր է:

Զաքարյանների միջանձնային ու միջճյուղային փոխհարաբերությունները

Զաքարյանների ճյուղավորման հիմքը դրեց այդ տոհմի մեջ հայտնի առաջին սերունդը ներկայացնող ավագ Սարգսի՝ XII դ. առաջին կեսին գործած «հայ ազգաւ և ուղղափառ հաւատով»[2] որդի Զաքարե Ա-ն՝ իր Սարգիս (Մեծ Սարգիս) և Վահրամ անունները կրող որդիներով: Նրանցից յուրաքանչյուրն իր հերթին ունեցավ համապատասխանաբար Զաքարե (Զաքարե Բ) ու Իվանե (Իվանե Ա) և Զաքարե (Բլուզ Զաքարե) ու Սարգիս (Սարգիս Ա Թմոգվեցի) անունով որդիներ: Մեծ Սարգսից սկիզբ առան Զաքարյանների ավագ երկու ճյուղերը, իսկ Վահրամից՝ կրտսեր դարձյալ երկու ճյուղերը:

Մեծ Սարգսից ծագած ավագ ճյուղերը նրա թոռների՝ Զաքարե Բ-ի ու Իվանե Ա-ի որդիներ Շահնշահ Ա-ի ու Ավագի անուններով կոչվեցին Շահնշահյաններ (Շահնշահյան տուն) և Ավագյաններ (Ավագյան տուն)[3]: Վահրամից ծագած ճյուղերից մեկը, որը ներկայացնում էին Բլուզ Զաքարեն[4] ու իր սերունդները, կոչվեցին Վահրամյաններ կամ էլ իրենց նստավայրի անունից Գագեցիներ[5]: Վահրամի մյուս որդի Սարգիս Ա-ն ու իր սերունդներն էլ իրենց իշխանանիստի անունից անվանվեցին Թմոգվեցիներ: Զաքարյան իշխանատոհմի բոլոր ճյուղերն էլ հիմնեցին իրենց իշխանությունները:

Դատելով թեկուզ պապի անունը կրելուց, Զաքարե Ա-ի որդիներից ավագը 1161 թ. վրաց թագավոր Գեորգի III-ի (1156-1184) կողմից Անիի քաղաքացիական կառավարիչ նշանակված Մեծ Սարգիսն էր[6]: Նա Լոռիում ուներ ոչ մեծ տիրույթներ, և լինելով Օրբելիների ավատատիրական հզոր տոհմի ստորական, մասնակցեց Գեորգի III-ի դեմ 1176 թ. նրանց բարձրացրած ապստամբությանը: Սակայն երբ Օրբելիների պարտությունն ակնհայտ դարձավ,

---

[2] **Ստեփաննոսի Օրբէլեան** 1910, 391:

[3] Տե՛ս **Ստեփաննոսի Օրբէլեան** 1910, 426:

[4] Այս Զաքարեն անվանակից հորեղբորորդուց տարիքով կրտսեր լինելու պատճառով ստացել էր Բլուզ (փոքր, կրտսեր) մականունը: Տե՛ս **Շահնազարյան** 1990, 48–49:

[5] Ստեփանոս Օրբելյանը Շահնշահյան ու Ավագյան տներից հետո Վահրամյաններին հիշատակում է «զԳագեցին» ձևով (տե՛ս **Ստեփաննոսի Օրբէլեան** 1910, 426):

[6] Տե՛ս **Վարդանայ** վարդապետի 1862, 127:

նա «Օրբելիների եղբայրն ու սիրելին»[7] համարվելով հանդերձ «որդու և եղբորորդու»[8] հետ լքեց նրանց ու անցավ թագավորի կողմը:

Վարդան վարդապետի ու վրաց Թամար թագուհու (1184–1207) առաջին պատմիչի վերոբերյալ վկայություններից հետևում է, որ առնվազն արդեն 1161-ին հոր կամ առաջացած տարիքով կամ էլ հանգուցյալ լինելով պայմանավորված՝ Զաքարյան իշխանատոհմը գլխավորում էր Մեծ Սարգիսը: Բացի այդ, պարզվում է, որ նախքան 1176 թ. կեսերը նրա կրտսեր եղբայր Վահրամը վախճանվել էր, և ինքն էր խնամակալում վերջինիս որդուն: Չնայած վրաց պատմիչը Մեծ Սարգսի որդու և եղբորորդու անունները չի հիշատակում, անառարկելիորեն նկատի է ունեցել նրա ու Վահրամի ավագ որդիներ Զաքարե Բ-ին և Բլուզ Զաքարեին: Մեծ Սարգիսն անվիճելիորեն հոգ էր տանում նաև Բլուզ Զաքարեի կրտսեր եղբոր՝ Սարգիս Ա Թմոգվեցու մասին:

Օրբելիների ապստամբության ժամանակ Զաքարյանների ճամբարափոխությունը միանշանակ չընդունվելով հանդերձ[9] վկայեց վճռական պահին այդ տոհմի ճիշտ կողմնորոշվելու և համախումբ գործելու կարողությունը: Դա իր հերթին դրեց պատմական ասպարեզում առաջին քայլերն անող այդ պատվախնդիր ու ռազմական տաղանդով օժտված իշխանատոհմի աննախընթաց վերելքի ամուր հիմքերը:

Թամար թագուհին 1185-ին Մեծ Սարգսին նշանակեց վրացական թագավորության գլխավոր զորահրամանատար՝ ամիրսպասալար և շնորհեց այդ պաշտոնի հայտանիշ Լոռէն[10]: Բացի այդ, նա Զաքարե Բ-ին «շնորհ արեց», իսկ Իվանե Ա-ին «մտցրեց դարբազիում (պետական խորհրդում – Ա.Շ.) ծառայողների կազմի մեջ»[11]: Շատ չանցած՝ Զաքարե Բ-ն ու Բլուզ Զաքարեն «պաշտոնապես ընդունվել էին պալատում»[12], այսինքն հատուկ աստիճանով ընդունվել էին պետական ծառայության[13]: Ինչպես տեսնում ենք, վրացական թագավորության կառավարման համակարգում Զաքարյան հորեղբորորդիների պաշտոնեական առաջխաղացումը կրում էր շարունակական ու համաժամանակյա բնույթ, ինչը պայմանավորված էր վրաց Բագրատունիներին նրանց տոհմի նվիրվածությամբ և, անշուշտ, Մեծ Սարգսի աջակցությամբ:

---

[7] Картлис цховреба 2008, 251.

[8] Картлис цховреба 2008, 251.

[9] Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ դար 1984, էջ 71:

[10] Տե՛ս Картлис цховреба 2008, 257:

[11] Տե՛ս Картлис цховреба 2008, 257:

[12] Տե՛ս Картлис цховреба 2008, 260:

[13] Картлис цховреба 2008, 297, ծան. 180:

Զաքարյանների միջճյուղային ու միջանձնային փոխհարաբերությունների սերտությունը դրսևորվեց նաև 1185–1187 թթ. դեպի թշնամական տարածքներ հայ-վրացական զորքերի արշավանքների ժամանակ: Դրանցից «Դվինի երկիր» արշավանքը Զաքարյանները նախաձեռնեցին չորս հորեղբորորդիներով՝ սեփական ուժերով[14]: Ապա նրանք համատեղ մասնակցեցին «Գանձակից ներքև՝ մինչև Բելաքունի, ապա Արաքսից վերև մինչև Մասիս ընկած երկրներ»[15] կատարված ևս մի հաջող արշավանքի:

Մեծ Սարգսի մահվանից հետո (1187 թ.) Զաքարյան իշխանատոհմի ավագ դարձավ Զաքարե Բ-ն: Նրա գլխավորությամբ Զաքարյանների բոլոր ճյուղերի ներկայացուցիչներն իբրև Թամար թագուհու հավատարիմ ստորականեր, համատեղ մասնակցեցին նրա առաջին ամուսին Յուրի Բոգոլյուբսկու (Գեորգի Ռուս) գլխավորած 1190–1191 թթ. ավատատիրական հզոր ապստամբության ճնշմանը: Չնայած այդ ապստամբության փաստական ղեկավար Վարդան Դադիանին Բլուզ Զաքարեի անմիջական գերական էր, նա հետևեց իր հորեղբորորդիներին և Սոմխիթի ավատատերերից միակն էր, որ ոչ միայն չհարեց ապստամբներին, այլև գործուն մասնակցեց նրանց ելույթի ճնշմանը[16]: Զաքարյան չորս հորեղբորորդիները հատկապես աչքի ընկան Ջավախքում կայացած վճռական ճակատամարտում ապստամբներին ջախջախելիս[17]:

Թամար թագուհին ապստամբությունը ճնշելուց հետո իր կողմնակիցներին հատուցելիս ոչ պատահաբար առատաձեռն գտնվեց հատկապես նրանց նկատմամբ: Զաքարե Բ-ը ստացավ Ռուսթավ քաղաքն ու ամիրսպասալարի պաշտոնը, Իվանե Ա-ն՝ Կայան ու Կայծոն բերդերը և մսախուրթ-ուխուցեսությունը՝ արքունի սենեկապետությունը, Բլուզ Զաքարեն՝ Գագ, իսկ նրա եղբայր Սարգիս Ա-ն Թմոգվի բերդը[18]: Որոշ ժամանակ անց, Զաքարե Բ-ին հանձնվեց նաև մանդատուրթ-ուխուցեսի՝ արքունի արարողապետի պաշտոնը:

Գեորգի Ռուսի ապստամբության ճնշումից շատ չանցած ռազմական անուրանալի տաղանդով օժտված «արիագոյնք»[19] Զաքարյանները, նորանվաճված տարածքները դրանք գրաված զորավարներին հանձնելու ուղեգիծ որդեգրած վրաց Բագրատունիների հովանավորությամբ ու աջակցությամբ,

[14] Картлис цховреба 2008, 260.
[15] Картлис цховреба 2008, 260.
[16] Картлис цховреба 2008, 265.
[17] Տե՛ս Картлис цховреба 2008, 265:
[18] Картлис цховреба 2008, 266:
[19] **Վարդանայ** վարդապետի 1862, 138:

ձեռնամուխ եղան սելջուկյան տիրապետության տակ եղած հայկական տարածքների ազատագրմանը: Որոշ հարկադրական ընդմիջումներով ուղեկցված ազատամարտերը գլխավորապես ընթացան հյուսիս-արևելյան Հայաստանում և շարունակվեցին մինչև 1236 թ. մոնղոլների նվաճողական արշավանքը: Ինչպես նախքան այդ ազատամարտերը, այնպես էլ դրանց ընթացքում Զաքարյան հորեղբորորդիները մեծ մասամբ համատեղ կատարեցին հետախուզական-ավարառուական բնույթ կրող մի շարք արշավանքներ, ինչը վկայում է նրանց սերտ համագործակցության մասին: Ավելին, այդ ազատամարտերին նրանց մասնակցությունը ոչ միայն անձնական, այլև տոհմական շահերով էր պայմանավորված: Այսպես, Կիրակոս Գանձակեցու վկայությամբ, սելջուկյան տիրապետության տակ գտնվող հայկական գավառների ազատագրման միջոցով իր իշխանության ընդարձակման գործում Բլուզ Զաքարեին մեծապես օգնում էր նրա եղբայր Սարգիս Ա Թմոգվեցին[20]: Նույն պատմիչի համաձայն, նրանց իրենց հերթին աջակցում էին «մեծ իշխանք», այսինքն Զաքարե Բ-ն և Իվանե Ա-ն և «ձեռնատուութեամբ նոցին առին և նոքա բազում գաւառս ի պարսից»[21]: Ընդ որում, Իվանե Ա-ն 1190-ական թթ. երկրորդ կեսին Նոր Բերդը համանուն իշխանությամբ ազատագրելով[22] հանձնել էր Բլուզ Զաքարեին: Ավելին, նա հետագայում՝ 1216/1219 թ., Բլուզ Զաքարեի որդի Վահրամ Գագեցուն օգնեց ազատագրել և իր իշխանությանը միացնել Շամքոր քաղաքը[23]:

Շատ ջերմ ու սերտ էին նաև միշտ համերաշխ Զաքարե Բ-ի և Իվանե Ա-ի փոխհարաբերությունները: Պատահական չէ, որ ժամանակակիցները նրանց հաճախ հիշատակում էին ոչ թե սոսկ իբրև եղբայրներ, այլ հարազատներ կամ հարազատ եղբայրներ[24]: Զաքարյան եղբայրների համախոհությունը խախտվեց միայն մեկ անգամ, երբ Զաքարե Բ-ի կողմից «բարեպաշտ հարազատ»[25], այսինքն հայ առաքելական եկեղեցու հավատարիմ հետևորդ բնութագրված Իվանե Ա-ն «խոտորեցաւ յաղանդն Քաղկեդոնի, յոր կործանեալ էին վիրք... իսկ Զաքարէ յուղղափառութեանն եկաց, զոր դաւանեն հայք»[26]:

---

[20] Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի** 1961, 163:

[21] **Կիրակոս Գանձակեցի** 1961, 163:

[22] Տե՛ս **Մուրադյան** 1977, 119:

[23] Տե՛ս **Վարդանայ** վարդապետի 1862, 140:

[24] Տե՛ս, օրինակ, Դիվան հայ վիմագրության 2012, 114, 165, Վիմական տարեգիր 1913, 59:

[25] Դիվան հայ վիմագրության 1966, 58:

[26] **Կիրակոս Գանձակեցի** 1961, 166:

Ընդ որում, Իվանե Ա-ն այդ քայլին դիմեց եղբոր կարծիքն անտեսելով[27]: Սակայն անգամ այդ հանգամանքը չխաթարեց նրանց փոխհարաբերությունները:

Վստահաբար պնդելի է, որ Զաքարե Բ-ն մինչև մահը (1212 թ.) իր ավագությունը չէր չարաշահում ու եղբորը շատ ջերմ էր վերաբերվում: Այսպես, երբ Իվանե Ա-ն 1211-ին հայ-վրացական զորքերի կողմից Խլաթի պաշարման ժամանակ անզգուշաբար գերվեց, Զաքարե Բ-ն նրան ազատելու համար կատարեց այդ քաղաքի տեր ալ-Մալիք ալ-Ահուադի դրած բոլոր պայմանները, որոնք շատ ծանր էին[28]:

Սակայն երբ հարկ էր լինում, նա չէր վարանում տեղին կշտամբելու իր մեղանչած ազգականին: Այսպես, երբ 1211 թ. աշնանը – 1212 թ. սկզբին Զաքարյանների Ատրպատական ու Խորասան կատարած արշավանքի ժամանակ Սարգիս Ա Թմոգվեցու որդի Թաղիադինը Զաքարե Բ-ի հրամանը խախտելով՝ առանց նրան իրազեկ պահելու հարձակվեց հակառակորդի վրա, նա չնայած հաղթանակ տանելուն, արժանացավ Զաքարե Ա-ի խիստ հանդիմանությանը[29]:

Կարելի էր կարծել, որ հետագայում Զաքարյանների տարբեր ճյուղերի ներկայացուցիչների փոխհարաբերություններին բնորոշ սերտությունը կպահպանվի: Սակայն կատարվեց հակառակը: Զաքարե Բ-ից հետո «մնաց որդի Զաքարեի՝ մանուկ տիօք Շահնշահ անուն նորա, զոր սնոյց Իվանէ ընդ որդւոյ իւրում Սարգսի, զոր Աւագն կոչէին, մինչև եհաս յարբունս հասակի և տիրեաց հայրենի իշխանութեանն»[30]: Իրականում «յարբունս հասակի» հասած Շահնշահ Ա-ն լիովին «հայրենի իշխանութեանը» չտիրացավ:

Ճիշտ է, Շահնշահ Ա-ն հայրական բոլոր տիրույթները ժառանգեց[31], սակայն նրան տրվեց հոր արքունի պաշտոններից միայն մանդատուրթ-ուխուցեսությունը, իսկ կարևորությամբ դրան գերազանցող ամիրսպասալարությունը՝ ոչ: Դրան խանգարեց եղբոր մահվանից հետո Զաքարյան իշխանատոհմի ավագությունը ստանձնած Իվանե Ա-ն: Օգտվելով 1197 թ. ծնված[32] Շահնշահ Ա-ի անօգնականությունից, կնոջ՝ Խոշաքի հետ նրա խնամակալը լինելուց և

[27] Տե՛ս Картлис цховреба 2008, 281:
[28] Մանրամասն տե՛ս **Շահնազարյան** 2005, 40–41:
[29] Տե՛ս Картлис цховреба 2008, 288:
[30] **Կիրակոս Գանձակեցի** 1961, 186–187:
[31] Տե՛ս Картлис цховреба 2008, 338:
[32] Տե՛ս **Մուրադյան** 1977, 104, ծան. 29:

ամենաուշը 1212-ից իբրև վրացական թագավորության աթաբեկ (թագաժառանգի խնամակալ) արքունիքում ունեցած գերազդեցիկ դիրքից, նա տիրացավ նաև ամիրսպասալարության պաշտոնին: Եվ դա այն դեպքում, երբ այդ պաշտոնի նկատմամբ Շահնշահ Ա-ի ժառանգորդական իրավունքները շեշտվում էին դեռ 1206 թ., երբ նա հոր հետ միասին հիշատակվում էր իբրև ամիրսպասալար. «յամիրսպասալարութեանն Զաքարէի եւ որդւոյ իւրոյ Շահնշահի»[33]:

Իվանե Ա-ի այս քայլը հարուցեց ոչ միայն Շահնշահ Ա-ի անթաքույց դժգոհությունը, այլև ժամանակակիցների կողմից հասկանալիորեն միանշանակ չընդունվեց[34]: Ամիրսպասալարության պաշտոնը չժառանգելու պատճառով հորեղբորից դժգոհ լինելու վառ վկայություն է Արթիկի Ս. Գևորգ եկեղեցում 1222-ին Շահնշահ Ա-ի թողած ուշագրավ արձանագրությունը[35]: Դրանում նա իր զավակներին ու հորեղբորորդի Ավագին իբրև եղբոր՝ «եղբաւրն իմոյ Ավագին»[36] հիշատակելով հանդերձ, ոչ պատահաբար հորեղբորն անտեսել է: Այդ արձանագրության շահեկան քննությունը կատարած Հ. Մարգարյանն իրավացիորեն նկատել է, որ «այս իրողութեան պատճառները պէտք է փնտրել ներընտանեկան փոխյարաբերությունների ոլորտում»[37], հավելելով, որ այդ կերպ «Զաքարէի որդին հայրական դիրքը վերստին յիշեցնելու խնդիրն է լուծել»[38]: Պետք է նաև կարծել, որ Շահնշահ Ա-ն Ավագին իբրև եղբայր հիշատակելով նկատի է ունեցել վերջինիս հետ միասին նրա մոր կողմից սնուցված լինելը:

Իվանե Ա-ն ամիրսպասալարության պաշտոնը յուրացնելով հիմք պատրաստեց, որ այն փոխանցվի ոչ թե զորավարական մեծ տաղանդով օժտված եղբորորդուն, այլ, եթե հավատանք Սամվել Անեցու շարունակողին, 1206 թ. ծնված[39], այսինքն Շահնշահ Ա-ից 9 տարով փոքր «պատերազմասէր»[40], բայց ռազմական ձիրքով նրան զիջող Ավագին: Դա տեղի ունեցավ 1227-ին՝ Ռուսուդան թագուհու (1223–1245) օրոք, երբ ըստ Սամվել Անեցու շարունակողի՝ Ավագն ընդամենը 21 տարեկան էր:

---

[33] Դիվան հայ վիմագրության 2012, 319:
[34] Տե՛ս օրինակ Դիվան հայ վիմագրության 1966, 2, 4, 17:
[35] Տե՛ս Դիվան հայ վիմագրության 2017, 66:
[36] Դիվան հայ վիմագրության 2017, 66:
[37] **Մարգարեան** 2019, 84:
[38] **Մարգարեան** 2019, 85:
[39] Տե՛ս **Սամուէլ Անեցի** և շարունակողներ 2014, 216:
[40] **Վարդանայ** վարդապետի 1862, 148:

Այդուհանդերձ, ինչպես հետևում է Օձուն գյուղի 1228 թվակիր մի արձանագրությունից, Շահնշահ Ա-ն, որն Ավագի ամիրսպասալար դառնալուց հետո էլ շարունակում էր այդ պաշտոնը կրող համարվել[41], ստիպված էր բավարարվել մանդատուրթ-ուխուցեսության պաշտոնով: Սակայն Շահնշահյաններն ամիրսպասալարությունը կորցնելու մտքի հետ չէին հաշտվել և այդ պաշտոնը մնում էր նրանց ու Ավագյանների միջճյուղային եթե ոչ պայքարի, ապա «վիճարկումների առարկայ»[42]: Ի դեպ, Շահնշահ Ա-ի զորքի օգնությամբ իր իշխանության տարածքը զգալիորեն ընդարձակած Իվանե Ա-ն նրան որևէ կերպ չհատուցեց: Այս իրողությունը ևս եղբորորդու նկատմամբ նրա իրական վերաբերմունքի ցուցիչ է:

Ինչ վերաբերում է Իվանե Ա-ի մսախուրթ-ուխուցեսության պաշտոնին, ապա այն, անկասկած ոչ առանց նրա միջամտության, տրվել էր Վահրամ Գագեցուն: Սա պետք է բացատրել ի դեմս եղբորորդու՝ Շահնշահյանների հետ փոխհարաբերությունների սրման պայմաններում Վահրամյանների հետ Ավագյանների կապերն ավելի ամրապնդելու և արքունի այդ կարևոր պաշտոնն իր տոհմի ձեռքում պահելու Իվանե Ա-ի ցանկությամբ:

Իվանե Ա-ի ու Վահրամ Գագեցու համախոհությունը դրսևորվեց նաև այն ժամանակ, երբ նրանք վրացական թագավորության այլ մեծատոհմիկներից առավել խիստ դժգոհելով վրաց թագավոր Գեորգի Լաշայի (1207–1223)՝ թագակրին անվայել վարքից, նրան ստիպեցին մեղանչելով «երդվել հետագայում ոչինչ չանել առանց իրենց խորհրդի»[43]: Վահրամ Գագեցու և Շահնշահ Ա-ի նկատմամբ Իվանե Ա-ի վերաբերմունքի տարբերության մասին վկայում է նաև այն փաստը, որ Նորավանքի Սուրբ Նշանի պատկանելիության շուրջ ծագած վեճը հարթելու համար Դվինում 1216 թ. վերջինիս հրավիրած դատական ատյանի մասնակիցների թվում Վահրամ Գագեցին հիշատակվում է, իսկ Շահնշահ Ա-ն՝ ոչ[44], ինչը վերջինիս անչափահասությամբ չի կարելի բացատրել:

Այդուհանդերձ, Իվանե Ա-ի ու Վահրամ Գագեցու փոխհարաբերությունները միշտ չէ, որ անամպ էին, ինչի վկայությունն է 1225 թ. կայացած Գառնիի ճակատամարտին վերջինիս չմասնակցելը: Թվում է, թե դրա պատճառը հայտնել է Կիրակոս Գանձակեցին: Ըստ նրա, Ռուսուդան թագուհին ու Իվա-

[41] Տե՛ս Դիվան հայ վիմագրության 2012, 296:
[42] **Մարգարեան** 2019, 89:
[43] Картлис цховреба 2008, 265.
[44] Տե՛ս **Ստեփաննոսի Օրբէլեան** 1910, 355:

նե Ա-ն այդ ճակատամարտից առաջ «դաշինս եդեալ էին, եթէ յաղթեսցեն... զամենայն հայ մարդ ի կրօնս վրաց դարձուսցեն, որք ընդ իշխանութեամբ նոցա և զընդդիմացեալսն՝ սրով բարձցեն»[45], ինչին Վահրամ Գագեցին, ի թիվս այլ հայ իշխանների, անկասկած, դեմ լինելով, ճակատամարտին չի մասնակցել:

Ռուսուդանի գահակալելուց հետո ևս Զաքարյանները համերաշխ շարունակեցին մնալ վրաց Բագրատունիների հենարանը և նա «վարէր զիշխանութիւն թագաւորութեանն ի ձեռն զօրագլխացն Իւանէի, և որդւոյ իւրոյ Ավագին և Շահնշահի՝ որդւոյ Զաքարէի և Վահրամայ և այլոցն»[46]: Սակայն, երբ Ռուսուդանը, Գեորգի Լաշայի կտակը խախտելով և եղբորը տված խոստումը դրժելով, նրա որդի Դավթին (Ուլու Դավիթ) կյանքից զրկելու նպատակով՝ աքսորեց Կեսարիա և Քութաիսում թագադրեց իր որդի Դավթին (Դավիթ Նարին), Զաքարյաններից և ոչ մեկն ի թիվս այլ իշխանների՝ այդ արարողությանը ներկա չէր[47]:

Այս մասին հայտնող XIV դարի վրաց Անանուն ժամանակագիրը ոչ պատահաբար հարկ է համարել հավելել, որ այդ իշխաններից «յուրաքանչյուրը հնազանդ էր Ռուսուդան թագուհուն, բայց նրանց հարմար չէր ներկա գտնվել Դավթի թագադրմանը»[48]: Սակայն իրականում այդ իշխանների բացակայության պատճառն անհարմարությունը չէր: Պարզապես նրանք ևս, շատերի նման Ռուսուդանին սոսկ «աթոռակալ» դիտելով[49], վրաց գահի օրինական ժառանգորդ էին համարում ոչ թե նրա, այլ՝ Գեորգի Լաշայի, ճիշտ է անօրինական, որդուն: Ի դեպ, չնայած վրաց ժամանակագիրը թագադրությանը չմասնակցած Զաքարյաններից հանվանե հիշատակում է առաջացած տարիքի հետևանքով ասպարեզից փաստորեն հեռացած Իվանե Ա-ի փոխարեն այդ տոհմը գլխավորող Ավագի, Շահնշահ Ա-ի ու Վահրամ Գագեցու անունները միայն, իրադարձությունների հետագա ընթացքից երևում է, որ նրանց հետևել են նաև Թմոգվեցիները: Այսինքն, Զաքարյանների բոլոր ճյուղերի ներկայացուցիչներն էլ Ռուսուդանի որդու գահակալմանը դեմ են եղել:

Սակայն հետագայում այդ հարցում նրանց միակարծությունն Ավագի դիրքորոշման փոփոխության պատճառով խախտվեց: Բանն այն է, որ մինչ-

[45] **Կիրակոս Գանձակեցի** 1961, 224: Հմմտ. **Միխայէլի Ասորւոյ** 1871, 519–520:
[46] **Կիրակոս Գանձակեցի** 1961, 238:
[47] Տե՛ս Картлис цховреба 2008, 343:
[48] Картлис цховреба 2008, 343.
[49] Մանրամասն տե՛ս **Մուրադյան** 1977, 155:

դեռ Դավիթ Նարինը 1244 թ. կեսերից մոր գահակցի իրավունքներում հաստատվելու համար գտնվում էր Բաթու խանի մոտ, Ռուսուդան թագուհին 1245 թ. առաջին կեսին[50] «վճարեցաւ ի կեանս. և գրեաց գիր կտակի առ իշխանն Ավագ և յանձնեաց ի նա զորդին իւր, եթէ դարձցի ի ղանէն»[51]: Ընդ որում, դեռ 1243 թ. Բաթուի մոտ էր ուղարկվել նաև Ռուսուդանի կողմից աթաբեկ նշանակված Ավագը, որն այնուհետև տարվել էր Ղարաղորում:

Այս պայմաններում, հատկապես Զաքարյանների մնացած երեք ճյուղերի ներկայացուցիչների ջանքերով և Վահրամ Գագեցու ու Սարգիս Բ Թմոգվեցու անմիջական մասնակցությամբ, Ուլու Դավիթը Կեսարիայից բերվեց հայրենիք ու թագադրվելով կոչվեց «Վահրամուլ թագավոր, այսինքն թէ Վահրամ եդիր թագավոր»[52]: Մոնղոլներն Ուլու Դավթին ևս Սարգիս Բ Թմոգվեցու ուղեկցությամբ ուղարկեցին նախքան այդ Դավիթ Նարինին Ղարաղորում ճանապարհած Բաթու խանի մոտ: Ղարաղորումում Դավիթ Նարինը մնում էր Ավագի հետ[53], ինչը փաստում է նրանց հարաբերությունների սերտությունը: Շատ չանցած Բաթուն Ուլու Դավթին ևս Սարգիս Բ Թմոգվեցու հետ ուղարկեց Ղարաղորում, որտեղ նա բանավիճում էր Դավիթ Նարինի կողմնակիցների հետ[54]:

Ի վերջո, մեծ խան Գոյուքը (1246–1248) երկու Դավիթներին էլ թագավոր հաստատեց՝ Ուլու Դավթի ավագությամբ[55]: Երբ նրանք 1248 թ. վերադարձան Վրաստան՝ «գանձս թագաւորութեան ... բաժանեալ ... միջնորդութեամբ Աւագին»[56], որը 1247 թ. կեսերից գտնվում էր Վրաստանում: Որ ի հակադրություն իր տոհմակիցների, մասնավորապես Շահնշահ Ա-ի, Ավագը Դավիթ Նարինի գահակալության հարցում իր սկզբնական դիրքորոշումը փոխել էր, վկայում է վրաց Անանուն ժամանակագիրը: Ըստ նրա, երբ երկու Դավիթներն «ամուր թագավոր նստեցին... այդ պատճառով Շանշեի (Շահնշահ Ա-ի – Ա. Շ.) սերը կասկածելի դարձավ Լաշայի որդի Դավթի հանդեպ, իսկ Ավագի նվիրվածությունը՝ Ռուսուդանի որդի Դավթի նկատմամբ»[57]: Դավիթ Նարինի գահա-

[50] Տե՛ս Հայոց պատմություն, հ. II, գ. երկրորդ 2014, 287–288:

[51] Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի** 1961, 316:

[52] **Գրիգոր Ակներցի** 1974, 34: Կիրակոս Գանձակեցին սխալմամբ այս արարողության մասնակից է համարել նաև Ավագին (տե՛ս **Կիրակոս Գանձակեցի** 1961, 289:

[53] Տե՛ս Картлис цховреба 2008, 353:

[54] Տե՛ս Картлис цховреба 2008, 359:

[55] Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի** 1961, 316:

[56] **Կիրակոս Գանձակեցի** 1961, 316–317:

[57] Картлис цховреба 2008, 360.

կալման հարցում Ավագի դիրքորոշման փոփոխությունը բացատրելի է Ռուսուդան թագուհու կտակով նրա որդու խնամակալությունն իրեն հանձնված լինելով: Վերոգրյալի լույսի ներքո Պռոշ Խաղբակյանն Ավագին «Վրաց թագադիր»[58] կոչելիս թերևս նկատի է ունեցել նրա աթաբեկության պաշտոնը: Ինչ վերաբերում է Ավագի՝ Շահնշահյանների ու Ավագյանների փոխհարաբերություններում կռվախնձորի վերածված ամիրսպասալարության պաշտոնին, ապա օրինական արու զավակ չունեցող[59] Ավագի մահվանից հետո (1250 թ.) այն տրվեց Շահնշահ Ա-ի որդի Զաքարե Գ-ին:

Եզրակացություն

Զաքարյանների միջանձնային ու միջճյուղային փոխհարաբերությունների պատմության ուսումնասիրությունը թույլ է տալիս ավելի առարկայական ու ամբողջական պատկերացում կազմել այդ նշանավոր հայկական իշխանատոհմի ներքին կյանքի մասին: Մեծ Սարգսի ու Զաքարե Բ-ի ավագության ժամանակ Զաքարյանների միջանձնային ու միջճյուղային փոխհարաբերություններին բնորոշ էին համերաշխությունը, միակարծությունն ու փոխօգնությունը: Ընդ որում, այդ առումներով հատկապես սերտ էին Շահնշահյանների ու Ավագյանների և վերջիններիս ու Վահրամյանների, ինչպես նաև Վահրամյանների ու Թմոգվեցիների միջճյուղային փոխհարաբերությունները: Բնականաբար, սերտ էին նաև Զաքարյանների այդ ճյուղերի ներկայացուցիչների միջանձնային փոխահարաբերությունները:

Հատկապես սերտ էին Զաքարե Բ-ի ու Իվանե Ա-ի փոխհարաբերությունները: Սակայն հետագայում Շահնշահյանների ու Ավագյանների փոխհարաբերությունները կորցրին նախկին ջերմությունը, քանի որ Շահնշահ Ա-ն չհաշտվեց հոր ամիրսպասալարության պաշտոնին՝ Իվանե Ա-ի տիրանալու, իսկ հետո իր որդի Ավագին փոխանցելու հետ: Ընդ որում, Իվանե Ա-ի մասխուրթ-ուխուցեսության պաշտոնը ոչ առանց նրա միջամտության տրվեց Վահրամ Գագեցուն: Դա նպատակ ուներ Վահրամյանների հետ Ավագյանների կապերն ամրապնդել և այդ արքունի կարևոր պաշտոնը պահել Զաքարյանների ձեռքում: Միջճյուղային փոխհարաբերություններում Զաքարյանների միակարծությունը խախտվեց, երբ վրաց գահի համար Գեորգի Լաշայի ու Ռուսուդանի որդիների պայքարում Ավագն իր սկզբնական դիրքորոշումը փոխելով, ի հակադրություն Զաքարյանների մյուս ճյուղերի ներկայացուցիչների,

[58] **Յովսէփեան Գարեգին** 1969, 305:
[59] Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի** 1961, 321:

պաշտպանեց Ռուսուդանի որդի Դավիթ Նարինին: Այսպիսով, քննվող ժամանակամիջոցում Զաքարյանների միջանձնային ու միջճյուղային փոխհարաբերությունները ենթարկվեցին էական փոփոխությունների:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գրիգոր Ակներցի 1974, Պատմութիւն թաթարաց, Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 80 էջ:

Դիվան հայ վիմագրության 1966, պրակ I, կազմեց Հ.Ա. Օրբելի, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 138 էջ:

Դիվան հայ վիմագրության 2012, պրակ IX, կազմեցին Ս.Գ. Բարխուդարյան, Կ.Գ. Ղաֆադարյան, Ս.Տ. Սաղումյան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 611 էջ:

Դիվան հայ վիմագրության 2017, պրակ X, կազմեց Ա.Գ. Բարխուդարյան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 211 էջ:

Կիրակոս Գանձակեցի 1961, Պատմություն Հայոց, Աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատ., Երևան, 426 էջ:

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ դար 1984, կազմեց Ա.Ա. Մաթևոսյան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 987 էջ:

Հայոց պատմություն 2014, հ. II, գիրք երկրորդ, Երևան, «Զանգակ» հրատ., 798 էջ:

Մարգարեան Հ. 2019, Դիտարկումներ Արթիկի 1222 թ. վիմագիր արձանագրութեան վերաբերյալ, Հանդէս ամսօրեայ, թիվ 1–12, Վիեննա, էջ 79–100:

Միխայելի Ասորւոյ Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորւոյ 1871, Երուսաղէմ, ի տպարանի սրբոց Յակովբեանց, 526+124 էջ:

Մուրադյան Պ. 1977, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 362 էջ:

Յովսէփեան Գ. 1969, Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, տպարան կաթողիկոսութեան հայոց Մեծի տանն Կիլիկիոյ, 523 էջ:

Շահնազարյան Ա. 1990, Վահրամյանների իշխանությունը, Երևան, «Հայաստան» հրատ., 216 էջ:

Շահնազարյան Ա. 2005, Զաքարյանների ազատամարտերի երկրորդ փուլը, Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 3, Երևան, էջ 32–52:

Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց 1910, Թիֆլիս, Ելեքթրաշարժ տպ. օր. Ն. Աղանեանցի, 618 էջ:

Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ 1862, ի Վենետիկ, ի Սուրբ Ղազար, 184 էջ:

Վիմական տարեգիր 1913, կազմեց Կ. Կոստանեանց, տպարան գիտութեանց ճեմարանի կայսերականի, Ս.-Պետերբուրգ, 292 էջ:

Картлис цховреба 2008, История Грузии, Тбилиси, изд. «Артануджи», 451 с.

Шихаб ад-Дин, Мухаммад ан-Насиви 1973, Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны, перевод с арабского, предисловие, комментарии, примечания и указатели З.М. Буниятова, изд-во «ЭЛМ», 450 с.

ИЗ ИСТОРИИ ОТНОШЕНИЙ МЕЖДУ РАЗНЫМИ ПРЕДСТАВИТЕЛЯМИ И ВЕТВЯМИ РОДА ЗАХАРЯНОВ (1160–1240-ЫЕ ГОДЫ)

ШАХНАЗАРЯН А.

Резюме

Ключевые слова: Захаряны, Великий Саргис, Закаре II, Иване I, Авак, Шахиншах I, Вардан Гагеци.

Изучение истории отношений между представителями и ветвями рода Захарянов позволяет составить более целостное представление о внутренней жизни этого известного армянского княжеского рода. Выясняется, что в период главенства Великого Саргиса и Закаре II для отношений между представителями и ветвями этого рода характерны были единомыслие и содействие друг другу. Однако в дальнейшем, когда главенство этого княжеского рода перешло к Иване I, а затем – к его сыну Аваку, эти отношения подверглись существенным изменениям, что во многом было обусловлено соперничеством между ветвями Захарянов – шахиншахов и Авакянов за должность амирспасалара. Немалую роль сыграло и то обстоятельство, что, в противоположность другим ветвям Захарянов, в борьбе за грузинский престол Авакяны стали сторонниками кандидатуры Давида Нарина, а не Улу Давида.

FROM THE HISTORY OF INTERPERSONAL AND INTER-BRANCH RELATIONS OF THE ZAKARIANS (1160–1240)

SHAHNAZARYAN A.

Summary

Keywords: the Zakarid dynasty, Sargis the Great, Zakare II, Ivane I, Avak, Shahnshah I, Vahram Gagetsi.

The study of the history of the relationship between the representatives and branches of the Zakarid dynasty enables us to have a more complete understanding of the inner life of this well-known Armenian princely family. As it turns out, during the period of the leadership of Sarkis the Great and Zakare II, the relationship between the representatives and branches of this dynasty was characterized by unanimity of thought and mutual support. However, later, when the headship of this princely family passed to Ivane I, and then to his son Avak, both the interpersonal and interbranch relationships in this family were subjected to significant changes, and this was largely due to to the rivalry for the position of the amirspasalar (the commander of the royal forces), that occurred between the Shahinshah and Avakian branches of the Zakarids. Significant was also the role of the circumstance that, contrary to other branches of the Zakarian family, in the struggle for the Georgian throne, the Avakians eventually became supporters of the candidacy of David Narin, rathe than Ulu David.